

«20 18Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 9-ՐԴ ՄՐՑԱՇԱՐԻ I ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼ¹

Հարգելի գործընկեր, «Գործք» ամսագրի 98-րդ համարով տրվում է «ՀՀ լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի մեկնարկը: Փուլ առ փուլ բացահայտելու ենք 2018 թվականի լավագույններին և հետևելու նրանց՝ դեպի եզրափակիչ տանող ընթացքին: Եվ այսպես՝

«2018թ. ՀՀ լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 9-րդ մրցաշրջանի 1-ին ընտրական փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի բոլոր հարցերի ճիշտ պատասխանի դեպքում մասնակիցը կստանա ընդհանուր հաշվով 20 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների թիվը կազմում է 30 միավոր:

Առաջին փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Առաջին փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2018թ. ապրիլի 2-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում 2018թ. ապրիլի 3-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2019 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

«20 18Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 9-ՐԴ ՄՐՑԱՇԱՐԻ I ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ

1 Նշվածներից որո՞նք են համարվում հարկային արտոնություն՝

- ա) հարկից ազատում.
- բ) հարկի նվազեցում.
- գ) հարկի վճարման ժամկետի հետաձգում.

դ) ճիշտ են բոլոր տարբերակները:

2. Նշվածներից ո՞րն է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայր՝

- ա) կազմակերպության պետական գրանցման վայրը.
- բ) կազմակերպության փաստացի գործունեության իրականացման վայրը.
- գ) պետական հաշվառման վայրը.
- դ) բոլոր պատասխանները սխալ են:

¹ «2018թ. լավագույն հաշվապահ» մրցույթին ներկայացվող առաջադրանքները, խնդիրները և հարցաշարերը մշակվում, դրանց պատասխանները գնահատվում են «Գործք» ամսագրի զլխավոր խմբագրի հրամանով ստեղծված հանձնաժողովը, որի անդամ են հանդիսանում ՀՀ հարկային և աշխատանքային օրենսդրությունների, բիզնես հոգեբանության, Հայաստանի ամենահեղինակավոր և վաստակաշատ գիտնականները, պետական կառավարման մարմինների լավագույն մասնագետները:

3. Ո՞ր դեպքում ոչ առևտրային կազմակերպությունները կարող են համարվել շրջանառության հարկ վճարող՝

ա) երբ զբաղվեն օրնսդրությամբ չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ և այդ մասին նախապես գրավոր ծանուցեն լիազոր մարմնին.

բ) ցանկացած դեպքում.

գ) շրջանառության հարկով կարող են աշխատել բացառապես համայնքները.

դ) ոչ առևտրային կազմակերպությունները շրջանառության հարկով չեն կարող աշխատել:

4. ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում ԱԱԳ-ով հարկման բազա է համարվում՝

ա) ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքը.

բ) ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքի և տրանսպորտային ծախսերի հանրագումարը.

գ) ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքի և ՀՀ տարածքում տրանսպորտային ծախսերի հանրագումարը.

դ) բոլոր պատասխանները սխալ են:

5. Հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով շահութահարկի գծով ճանաչման ենթակա ծախսը (եկամուտը) հավասար է (եթե անտեսենք սեփական կապիտալում ճանաչված, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերումից առաջացող գումարները)՝

ա) այդ ժամանակաշրջանի արդյունքներով բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարին.

բ) բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարին՝ ճշգրտած հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների մնացորդներով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ.

գ) բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարին՝ ճշգրտած հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների մնացորդներով հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ.

դ) բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարին՝ ճշգրտած հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների մնացորդների փոփոխություններով:

6. Նշված ակտիվներից ո՞րն է դասակարգվում որպես ընթացիկ՝

ա) վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված և կապիտալացված ծախսումները, որոնք ակնկալվում է, որ կփոխհատուցվեն ավելի քան մեկ տարի հետո.

բ) անավարտ արտադրանքը, որը ակնկալվում է, որ պատրաստի արտադրանք կդառնա ավելի քան մեկ տարի հետո.

գ) հիմնական միջոցը, որի արժեքը 50.000 դրամից պակաս է.

դ) հիմնական միջոցը, որի արժեքը 25.000 դրամից պակաս է:

7. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ինչպե՞ս պետք է դասակարգվեն կազմակերպության կողմից կատարված ծախսերը՝

ա) ծախսերը պետք է դասակարգվեն ըստ դրանց բնույթի (օրինակ՝ աշխատավարձի գծով ծախսումներ, ամորտիզացիայի ծախսումներ, օգտագործված հումք և նյութեր և այլն).

բ) ծախսերը պետք է դասակարգվեն ըստ գործառույթի (օրինակ՝ վաճառված արտադրանքի (ապրանքների) ինքնարժեք, իրացման ծախսեր, վարչական ծախսեր և այլն).

գ) ծախսերը կարող են դասակարգվել ինչպես ըստ բնույթի, այնպես էլ ըստ գործառույթի.

դ) ծախսերը պետք է դասակարգվեն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում ներկայացված դասակարգմամբ:

8. Ապրանքների ներմուծման ժամանակ հաշվարկված մաքսատուրքի արտացոլում՝

- ա) Դեբետ 729
Կրեդիտ 524.
- բ) Դեբետ 216
Կրեդիտ 524.
- գ) Դեբետ 714
Կրեդիտ 524:

9. Պաշարների՝ տեխնոլոգիական գործընթացով նախատեսված պահպանման ծախսումների արտացոլում՝

- ա) Դեբետ 712
Կրեդիտ 521.
- բ) Դեբետ 714
Կրեդիտ 521.
- գ) Դեբետ 811
Կրեդիտ 521:

10. Շահութահարկի հաշվարկման նպատակներով դեբիտորական պարտքի դուրսգրման արտացոլում.

- ա) Դեբետ 714
Կրեդիտ 221.
- բ) Դեբետ 331
Կրեդիտ 221.
- գ) Դեբետ 941:

«20 18Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 9-ՐԴ ՄՐՑԱՇԱՐԻ I ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԽՆԴԻՐԸ

Կազմակերպությունը ստեղծվել է 2017 թվականի դեկտեմբերին: Մինչ 2018 թվականի փետրվարի 20-ը կազմակերպությունն օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն է ներկայացրել:

Կազմակերպությունը զբաղվում է բեռնափոխադրման և ուղևորափոխադրման գործունեությամբ: Առաջին եռամսյակում կատարել է ՌԴ ռեզիդենտ հանդիսացող կազմակերպության պատվեր՝ Երևան-Մոսկվա ուղղությամբ, որի արժեքը կազմել է 8 900 հազ. ՀՀ դրամ, ինչպես նաև ուղևորափոխադրում նույն երթուղով, որի համար վճարել են ուղևորները ՀՀ տարածքում:

Ընդհանուր գումարը կազմել է 5000 ռուբլուն համարժեք ՀՀ դրամ: Ուղևորներին նաև տրամադրվել է մեկանգամյա սննդի վճար՝ 45000 ՀՀ դրամին համարժեք:

Որոշել առաջին եռամսյակի շրջանառության հարկի գումարը:

1. $8\,900\,000 * 5\% = 445\,000$
2. Ուղևորափոխադրումները համարվում են արտոնագրային հարկով հարկման ենթակա գործունեություն:
Պատասխան՝ 445 000: